ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քննչական կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար պահատուփերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՊՏ-20/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի մարտի 05-ին կնքված N «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՊՏ-20/1.1» պայմանագրում 2020 թվականի սեպտեմբերի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: «Հատիք» ՍՊԸ կողմից առաջարկվել է 3-րդ եռամսյակում նախատեսվող ապրանքի մատակարարման ժամկետը երկարացնել 30 օրով:

.

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում 3-րդ եռամսյակում նախատեսվող ապրանքի մատակարարման ժամկետը երկարացնել 30 օրով:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 8.5 և 8.6 կետերը:

Պատվիրատու՝ ***ՀՀ քննչական կոմիտե***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

05.03.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՊՏ-20/1.1 պայմանագրի

Ք. Երևան « 29 » սեպտեմբերի 2020թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա.Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հատիք» ՍՊԸ -ը, ի դեմս տնօրեն Հայկ Հակոբյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 05.03.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-ՊՏ-20/1.1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով 3-րդ եռամսյակում նախատեսվող ապրանքի մատակարարման ժամկետը երկարացնել 30 օրով և սահմանել մինչև 30.10.2020թ.:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, Հ/Հ 900011000834 ՀՎՀՀ 02631263	«Հատիք» ՍՊԸ ք. Երևան, Զ.Քանաքեռցու 50 «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ 2052222088991001 ՀՎՀՀ 01000825 էլ. հասցեն hatiqllc@gmail.com Հեռ. (010)286647, (094)415124
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ